

**ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ՄԻ ՈՒՂԵԳՐԱԿԱՆ  
ԱՆԴՐԱԳԱՐՉ ՆԱՅԱՍՏԱՆԻՆ**

Ռաբիխարոնցի ռաբբի Փեթահիան<sup>1</sup> (Փեթահիա բեն Եակով Նա-Լաբան, Փեթահիա Ռեզենսբորգի) ԺԲ. դարի վերջի ԺԳ. դարասկզբի հեղինակ է: Ծնունդ է Ռաբիխարոնում (գերմ. Ռեզենսբորգ, Բավարիա): Երիտասարդության տարիներին թողել է Ռաբիխարոնը (որ մեծաթիւ և ուսումնասիրենց հրեայ համայնքի համար «հրէից Աթէնք» էր կոչում) և հաստատուել Պրահայում:

Իր ուղևորության ճշգրիտ թուականը յայտնի չէ: Ընդունուած է, որ Պրահայից ելել է 1170-1180 թթ. շրջանում, իսկ Երուսաղէմում եղել է 1187-ից առաջ (դարելով Սաղիմեան Լաբին թագաւորութեան սասին իր խօսքերից): Նամարում է նաև, որ Փեթահիան ճամփորդութիւնից վերադարձել է մինչ 1217-ը: Ինչպէս կարծում է Ռեզենսբորգեան անգլերէն թարգմանիչը, վերադառնալուց յետոյ Փեթահիան իր ձեռագիրը վարահել է ռաբբի Եհուդա Պիտսին<sup>2</sup>, որի ընդօրինակութիւնն է միայն հասել մեզ: Սա որոշ կերպով նկատելի է երկից: Ապացուցելու համար թարգմանիչն անգամ մի կողմ է թողնում այն հանգամանքը, որ Ռեզենսբորգեան ամբողջ շարադրանքն ընթանում է երրորդ դէմքով՝ «Փեթահիան ասում է», և մտնանալով է հարցի լուծումն ամփոփող մի հետաքրքրական հարուած, ուր ընդօրինակողը բացայայտում է իր անձն ու ցոյց տալիս, որ ամբողջութեամբ չի արտագրել Ռեզենսբորգի: Ուշագրաւ այդ հարուածը կբաղենք առանց կրճատումների. «Նիւնուէում մի աստղագուշակ կար, որի անունն էր ռ[աբբի] Շելոմոն: Նիւնուէի բոլոր իմաստունների բոլորում և Աստրեպանում ոչ ոք իր պէս մտորակների գիտակ չէ: Եւ ռ[աբբի] Փեթահիան հարցրեց նրան, թէ երբ է գալու Մեսիան: Նա պատասխանեց. «Ես յաճախ այդ պարզորոշ տեսել եմ մտորակներին [նայելիս]...»: *Բայց Ռաբբի Եհուդա Պիտսը սա գրի չի առնի*»<sup>3</sup>:

Փեթահիայի նօթերն առաջին անգամ տպագրուել են Sibbus (Ճամփորդութիւններ) համառօպ վերաբոլութեամբ (1595, Պրահա): Մենք օգտուել ենք 1856 թ. Լոնդոնում հրատարակուած՝ «Travels of Rabbi Petachia of Ratisbon, who, in the latter end of the twelfth century, visited Poland, Russia, Little Tartary, the Crimea, Armenia, Assyria, Syria, the Holy Land, and Greece. Translated from the Hebrew, and published, together with the original on opposite pages, by Dr. A. Benisch, with explanatory notes,

<sup>1</sup> Անգլերէն թարգմանութեան մէջ՝ Petachia, սակայն առանկ գործածական է Pethahiah ձևը. տես «Եբրայական հանրագիտարան»-ի Pethahiah յօդուածը (<http://jewishencyclopedia.com>):

<sup>2</sup> Տես «Travels of Rabbi Petachia», London, 1856, էջ IV:

<sup>3</sup> Տես անդ, էջ 13: Ինչպէս ծանօթագրում է անգլերէն թարգմանիչը, հրեայ աստուածաբանութեան մէջ բազմիցս նշուել են Մեսիայի գալստեան թուականներ, որ երբեւէ չեն իրականացել: Ընդգծումը՝ Գ. Մ.:

by the translator and William F. Ainsworth, ESQ., F.S.A., F.G.S., F.R.G.S.» օրինակից: Մենք քաղել ենք Նայասպանին առնչուող հայրուածները՝ իրաքանչիւրի սկզբում ուղիղ փակագծերում դնելով անգլերէնի համապատասխան էջը: Բենիշի ծանօթագրութիւնը դրել ենք փողափակում՝ էջահամարների կողքին գրելով ծանօթագրութեան բնագրային համարը: Մեր ծանօթագրութիւնները համարակալել ենք փառային արժէքներով՝ գերեզմանութեան վերջում:

Ինչպէս ցանկացած ուղեգրութիւն, Փերթահիայի սրեղծագործութիւնը եւս կրում է հեղինակի յոյզերի եւ մտքերի դրօշմը՝ թէ ինչն էր կարևոր եւ գերակայ ռաբբիի համար: Կարելի է ասել, որ նրան հիմնականում մի բան է յուզել. իր ճանապարհին եղած բնակավայրերում ո՞րքան հրէայ կայ, ինչպէս են նրանք ապրում եւ ինչպէս պաշտում ու պահպանում իրենց կրօնը: Իսկ թէ ինչ նպատակով էր Փերթահիան ձեռնարկել իր ուղևորութիւնը, ուսումնասիրողներին չի յաջողուել պարզել: Ուղեգրի մասին յայտնի փաստերն աւարտում են այսքանով:

Ուշագրաւ է նաեւ անգլերէն թարգմանողի հանգամանքը: Արրահամ Բենիշը (1811-1878) Պաղեստինում հրէաների վերահաստատման մեծագոյն ջարագովներից էր: Դեռեւս Պրահայում վիրաբուժութիւն ուսանելիս՝ Ալբերտ Ղեւիի եւ Մօրից Շպէլմանի հետ նա երագում էր հրէաների վերաբնակեցման մասին: Վիեննայի համալսարան փեղափոխուելով՝ Բենիշը ուսանողական գաղտնի մի ընկերակցութիւն սրեղծեց՝ իր գաղափարներն իրագործելու համար: Խումբը հիմնականում զբաղում էր արտասահմանեան այլուայլ բուհերում համախոհների որոնմամբ եւ «օգրակար» անձանց հաւաքագրմամբ: Առանձնակի յոյսեր էին կապում Անգլիայում բնակուող հրէաների հետ: Եւ 1841-ին Բենիշը Լոնդոն մեկնեց, սակայն Էական յաջողութիւնների չհասաւ: Իր երագանքներն ու յոյսերը իրականանալու հնարաւորութիւն պիտի սրանային միայն Alliance Israélite Universelle (1860) եւ Anglo-Jewish Association-ի (1871) հիմնումից յետոյ:

Գրական ասպարէզ Բենիշն իջաւ հրէաների քրիստոնէութիւն ընդունելը դարապարտող յողուածներով: Երկար փարիներ գլխաւորեց «The Jewish Chronicle» (ամենավաղ հիմնադրուած եւ անընդմէջ փպուող) հրէական թերթը: Յայտնի է նաեւ Աստուածաշնչին եւ աստուածաբանութեանը առնչուող գործերով:

Ինչպէս կարելի է նկատել վերը ասուածից, Բենիշի շարադրանքը սոսկ գիրական սկզբունքներով չէր կարող սահմանափակուել եւ անշուշտ ունենալու էր անհամեմատ ատելի մեծ յեղնախորք: Այս առումով յոյժ կարևոր է Նայթում հրէական համայնքի անհերանալուն առնչուող հայրուածը, որ, թերեւս, պէտք է գրաւէր ներկայումս Նայասպանում հրէական արեան հեղքեր որոնողների ուշադրութիւնը:

**ՌԱՏԻՍԲՈՆՑԻ ՌԱԲԲԻ ՓԵԹԱՀԻԱՅԻ ՃԱՄՓՈՐԴՈՒԹԻՒՆԸ,  
ՈՐ ԺԲ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼԵՑ ԼԵՀԱՍՏԱՆ, ՌՈՒՍԱՍՏԱՆ,  
ՓՈՔՐ ԹԱՐԹԱՐԻԱ, ՂՐԻՄ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՍՈՐԻՔ, ՍԻՐԻԱ,  
ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ**

/3/ Սրանք այն ուղեւորութիւններն են, որ ձեռնարկեց Ռաբբի ՓեթաՀիան, որ ճամփորդեց բոլոր երկրներով:...

/7/ ...Ռաբբի ՓեթաՀիան անցաւ Թորգոմի երկիր<sup>1</sup>: Սրանից այնկողմ մարդիկ հաւատում են Մուհամեդի օրհնքին: Թողարմայից նա մտաւ Արարատի երկիրը: Նա ութ օրում ճամփորդեց հեռու՝ մինչեւ Նիսիբիս (Մծբին)՝ Արարատի<sup>2</sup> բարձր լեռները թողնելով աջ կողմում:...

/9/ ...Արարատի երկրում նա շրջագայեց Արարատեան լեռներով մինչեւ Նիսիբիս եւ Չոզեն Կաֆա<sup>3</sup> (որ է՝ Մեծ վիմի զօրութիւն): Արարատեան լեռների փեշերով նա երկու օր ճամփորդեց մինչեւ հանդիպակաց կողմը:... Խազարիան իր լեզուն ունի, Թողարման՝ իր (նրանք հարկ են վճարում յունաց արքային), եւ Կեղարը՝ իր սեփական լեզուն:...

/19/ ...Արարատի<sup>4</sup> երկրում մեծ քաղաքներ կան: Այնտեղ քիչ հրէայ կայ: Հին

1 /71-72 ծան. 8/ Թորգոմն և Արարատի երկիրը կայտնւում են հայաստանի հետ: Ռաբբիի պատմութեան այս հատումում զգալի կորուստ կայ: Նա չէր կարող ութ օրում հայաստանի սահմանից հասնել Նիսիբիս (Մծբին): Վրաստանի Միքիայում Նիսիբ կոչուած քաղաք կայ, որ յայտնի է 1839 թ. թուրք-եգիպտական ճակատամարտից, սակայն Ռաբբին, հասնւթէն, այստեղ նկարի ունի Մեսոպոտամիայի Նիսիբիսը:

Դիսիբի է, որ վրացիներն ու հայերը իրենց համարում են Թորգոմի ժառանգներ (Շենդ. Ժ., 3)<sup>ա</sup>:

2 /72 ծան. 9/ հասնւթէն ՓեթաՀիան «Արարատեան լեռներ» կայսկցութիւնը շփոթութեամբ կիրառել է ն՛ հայրի յիշեալ անուամբ առանձին լեռան (Շենդ. Է., 4), և՛ Եփրատից արևմուտք՝ Արարատի երկայնքով Երևանի հանդիպակացութեամբ ձգուող շրջայի առեջութեամբ: Դրանք թուրքերէն Կուս-Դաղ (Kus-Dagh) են կոչուած: Արարատ անուանուող լեռը այս շրջայի արեւելեան ծայրում է (հմմտ. այս լեռան՝ 48<sup>բ</sup> էջի յիշարակութիւնը): Թագաւորացում (Բ. Թագ. ԺԹ., 37 և Ես. ԼԷ., 38) յիշարակուած Արարատի երկիրը Ջոնաթանը<sup>բ</sup> համարում է Մարեթի երկիր:...

3 /72 ծան. 11/ Այս վայրը Պրոտոմէոսի Մաֆին է և Մուֆան Պրոտարթոսի մօտ, որ նկարագրում է Միդիայի դուստր և Տիգրանի կին Կլեոպատրային Մեքսոդորոս Սրեմիսացու և Սոփիկայ Ամփիկրատի յիշարակին դամբարաններ կանգնեցնելիս: Այն մինչ օրս կոչում է Նիզ Կաֆա (Վիմի ամրոց), որ յայտնի բերդ է Դիարբեքիի և Զեգիրահ իրն Օմարի միջև:

4 /85 ծան. 38/ Մենք արդէն բացատրել ենք, որ Արարատի երկիր ասելով՝ ՓեթաՀիան հայաստանը նկարի ունի: Գրդ ծանօթագրութեան մէջ ցոյց ենք տուել (իրականում խօսքը 12-րդ ծանօթագրութեան մասին Է-Գ. Մ.), որ հին ժամանակներում մեծ քանակով հրէաներ են հասարարուել Մծբինում: Այժմ դոկ. Մ. Ռաֆայի «Նիւսների յեպատրուածաչնչեան պատմութիւնից» քաղում ենք ՓեթաՀիայի յիշարակած՝ հրէաներին առնչուող յարկանշական մի հատում. «հայաստանի հրէական գաղթաւարերը, որոնց

ժամանակներում շատ հրէաներ են բնակուել այնտեղ: Սակայն նրանք ոչնչացրին միմեանց, մասնատուեցրին եւ հեռացան դէպի Բաբելի, Մեդացուց եւ Պարսկաստանի քաղաքները<sup>5</sup>:...

/47/ Բաղդադում նա տեսաւ Meshech-ի<sup>6</sup> արքաների հիւպատոսներին, որովհետեւ տեւ Մագդը մօտ տասն օրուայ հեռաւորութեան վրայ է այնտեղից: Երկիրն այնքան հեռու է, որքան Մթին սարերը<sup>6</sup>:...

/49/ ...Ռաբբի Փեթահիան ասաց, որ Արարատեան լեռները Բաբելոնից հինգ օրուայ ճանապարհի վրայ են: Արարատեան լեռները բարձր են: Մի բարձր լեռ կայ, որից վեր չորս ուրիշներն են, որոնցից երկուսն իրար հանդիպակաց են: Նոյեան տապանը քշուեց այս լեռների միջեւ ու չկարողացաւ դուրս գալ: Բայց տապանն այնտեղ չէ, որովհետեւ քայքայուել է: Լեռները հարուստ են թփերով եւ այլ բուսականութեամբ, եւ երբ ցօղն իջնում է նրանց վրայ, մանանայ է կաթում թերթերից, սակայն երբ շողում է արեւը՝ ջերմացնելով գոլորշիացնում է: Իսկ դա ինչ քանակութեամբ էլ որ հաւաքուի գիշերը, պահելու դէպքում նոյնպէս կցնդի: Այդ իսկ պատճառով նրանք մանանան հաւաքում են՝ թփերն ու ցօղունները քաղելով դեռ սառն վիճակում: Այդ բոյսերն ու եղինջը խիստ դառն են, սակայն երբ մանանայի հետ եփուում են, դառնում են մեղրից եւ ցանկացած այլ քաղցրաւենիքից անոյշ: Երբ բոյսը եփում են առանց արմատի, անսահման քաղցրութիւնից մաս-մաս է լի-

սկզբնատրուոնք համընկնում է Անտիոքոս Եպիփանէսի վերջին շրջանին, աստիճանաբար ձգուեցին դէպի Կովկասեան լեռնաշղթայ: Վաթսուն տարի անց Նայոց արքայ Տիգրանը նրանց թիր մեծապէս անկաջրեց՝ Պաղեստինից գերիներ բերելով: Նրանց կենտրոնը Մծբինն էր: Տրայանոսի (Trajan) հպարճանքների ժամանակ փոխաբանականների թիւն ակալացաւ: Յիշեալ պարճատներով այնպիսի աճ գրանցուեց, որ Ռիթթերն իր Աշխարհագրութեան (Erdkunde) մէջ հիմնում է Դ. դարի մի յիշարակութեան վրայ, որում բազում քաղաքներ են մարտահանում, որ 8.000, 10.000 եւ անգամ 30.000 հրէայ ընդունելի է բնակուել: Ինչեւիցէ, չնայեա՞ծ Փեթախիայի նշումներին, մենք անկարող էինք գաղութների կործանման պատճառ հանդիսացած ներքին հակամարտութիւնների որեւէ յիշարակութիւն գրուել:

5 /86 ծան. 39/ Դժուար թէ հարկ կայ յիշեցնելու ընթերցողին, որ երկրների անունները մարտահանում են պարբերաշրջանը եւ ոչ մի դէպքում չեն որոշակիացնում աստիճանները, ինչպէս կանէր ժամանակակից աշխարհագրագէտը: Փեթախիայի ասածն ընդամենն այն է, որ Նայաստանի հրէաները գաղթեցին դէպի հարեան երկրներ:

6 /100-101 ծան. 78/ Զոռոյան (Կարդիակալ Պրասիո Ջոռոյա.-Գ.Մ.), խօսելով Գոգի եւ Մագոգի մասին, նշում է, որ Արեւելքի միտումն էր՝ մեկուսացած ժողովուրդներին լեռներին տեղատրելը եւ նրանց նկարագրելը իբրեւ պարտնշուած, յաճախ Կասպիականի հարեանութեանը: Տե՛ս Աբուֆեդայի, արաբ եւ այլ Արեւելեան հեղինակների, ինչպէս եւ Եզեկիէլի եւ Ապակալիպիսի մեկնիչների մօտ: Այս Մթին սարերը՝ սկնատու դեր են խաղում ուրբիների ստասպերական աշխարհագրութեան մէջ, դրանց եւ Մամբարիոն գետի մերձակայքում հրէայ հայրերը տեղատրում էին քսան ցեղերին: Ռաշիմ, իր Ամովսի մեկնութեան մէջ (IV. 3) «Նարմոն»-ը (որ Անգլիկան տարբերակում պատմամբ «պարար» է թարգմանուել, տե՛ս դր. Բենիշի թարգմանութիւնը) մեկնում է իբրեւ «Մթին սարեր», միևնույն Ռապարպարտը նոյնացնում է Նայաստանի հետ (տե՛ս Erech Milin, sub. V. Armenia): Նոյն Նայաստանի հետ է կապում նաեւ Թւսիմոյը (Kidushin, 72, a)՝ անդ տեղատրելով նաեւ Մեսոպոթի եւ Մոզաւիկին<sup>6</sup>:

նուժ եւ նմանուժ փոքրիկ հատիկների: Նրանք Ռաբբին մի քիչ տուեցին փորձելու համար, այն հալուեց իր բերանում: Այն անոյշ էր եւ հասաւ մինչեւ երակներն ու մագանօթները, այնքան, որ նա անկարող էր դիմանալ դրա քաղցրութեանը<sup>7</sup>:

### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Անգլերէն թարգմանչի խօսքում հակասութիւն կայ. եթէ «*Թողարման եւ Արարատի երկիրը կապուժ են Հայաստանի հետ*», ապա ինչ կապ ունեն վրացիները, որ նոյնիսկ առաջին փուլն են գրաւել յիշարակուած շարքում:

բ. 48-րդ էջին երբայերէն բնագիրն է. համապարասխանաբար անգլերէնը 49-ին է:

գ. Իրականում խօսքը Կեղծ-Ջոնաթանի մասին է: Ծառայուն եւ ինդրայարոյց նիւթը մեր հարցին չխառնելու նպարակով պարզապէս մի մէջբերում անենք. «*Յովսեփոսը նշում է, որ նաւը կանգնեց «Կորդուաց լեռան վրայ»: Սա աստուածաշնչեան բնագրերի արամէական թարգմանութիւնների եւ տարբերակների արտացոլումն է: Թարգում Օնկելոս՝ «Քարդու լեռներին», Թարգում Կեղծ-Ջոնաթան՝ «Քարդուն լեռների վրայ», Փաշիթթա (ասորական տարբերակ)՝ «Քարդու լեռների վրայ», Թալմուդեան շրջանի ռաբբինները Բերեշիթ Ռաբբաճ Միդրաշեան գործում (xxxiii 4)՝ «Քարդունիայի լեռներին»: Յովսեփոսի Հնախօսութեան մէջ յիշատակուած Նիկողայոս Դամասկացին ասում է, որ մարդիկ հեղեղի ջրերից փախան Հայաստանի Բարիս (Baris) լեռը: Յոբելենից Գիրքը (ה'יב'ל'ד ספר, քրիստոնէութեան մէջ պարականոն՝ հրէական կրօնական գիրք.-Գ. Մ.), որ յաճախ տալիս է մարդկանց եւ տեղերի անուններ, որոնք Աստուածաշունչը չի յիշատակում, նշում է, որ Տապանը կանգ առաւ Արարատի լեռներից մէկի՝ Լուբարի (Lubar) գագաթին (v: 28; vi: 1 and see vii: 17; x: 15)»։ փն՝ Benjamin Edidin Scolnic, If the Egyptians drowned in the Red sea where are Pharaoh's Chariots? Exploring the Historical Dimension of the Bible, Studies in Judaism, University Press of America, 2005, էջ 37-38, հմմտ. «The Catholic Encyclopedia», Noah's Ark բառայօդուածը (<http://www.newadvent.org/cathen/01720a.htm>): Յատկէնք միայն, որ Յորելենիցում յիշուած Լուբար փեղանուան մէջ Լ-Ղ անցումը օրիպատի համարելով՝ կարանանք Ղուբար ձեռք, որ նոյն Մեծ Մասիսն է. փն՝ Թ. Յակոբեան եւ ուրիշներ, Նայասարանի եւ յարակից շրջանների փեղանունների բառարան, հատ. 3, Երևան, 1991: Իսկ Կորդուաց կամ Մարաց լեռանը (լեռներին) կայանելու կապակցութեամբ պէտք է յիշել օրինակ Տիգրանի վէպը, ուր խօսում է մարերին Արարատի փեշերին բնակեցնելու մասին. այս առթիւ*

<sup>7</sup> /101 ծան. 81/ Մարկո Պոլո եւ միւս ճանապարհորդները նմանարիպ կերպ են նկարագրում Արարատը՝ իբրև բուսականութեամբ հարուստ: Մակայն փաստանին առնչուող՝ Փեթասիայի յիշարակութիւնը չի գուճադրում Բենջամինի խօսքերին (էջ 52), որն այն նկարագրում է իբրև գոյութիւն ունեցող, եւ իբր Օմար բեն Ալ Խատաբ (Omar Ben Al Khatab) դրանից մզկիթ է սարքել: Մենք անկարող էինք ճշտել, թէ յարկապէս ո՞ր բոյսն է նկարի ունի Փեթասիան, եւ ինչն է մանանայ անուանումը:

ընդհանուր առմամբ մեր յօդուածի համապատասխան հարուածը՝ «Ներակալ բառի մեկնաբանութեան փորձ Նայկի առասպելի լոյսի ներքոյ»։ «Բաները Երևանի համալսարանի», 2004, թ. 2, էջ 36:

դ. Ուարբիի փողերն աղերսում են Եզեկ. Լ.Ը. 4-ում յիշարակուած թագաւորութիւններին, որ երբեմն գուգադրում են Ծննդ. Ժ. 2-ի հետ:

Դիւարակներ մի քանի փարբերակ: «And say, Thus saith the Lord GOD; Behold, I am against thee, O Gog, the chief prince of *Meshech* and *Tubal*» (King James Version), իսպաներէն՝ «Y di: Así dijo el Señor DIOS: He aquí, yo voy a ti, oh Gog, príncipe de la cabecera de *Mesec* y *Tubal*» (Sagradas Escrituras), «and say, 'Thus says the Lord GOD, "Behold, I am against you, O Gog, prince of *Rosh*, *Meshech* and *Tubal*» (New American Standard Bible): Ռուսերէնում՝ «и скажи: так говорит Господь Бог: вот, Я - на тебя, Гог, князь *Роша*, *Мешеха* и *Фувала!*» (Русский Синодальный текст): Նայերէն փարբերակում՝ «*եւ ասացես. Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ի վերայ քո Գոգի՝ իշխանդ Ռովսմեսովքայ եւ Թորեկայ*»: Ինչպէս փնտրում ենք, ամերիկեանում եւ ռուսականում երեք՝ *Rosh*, *Meshech*, *Tubal* եւ *Рош*, *Мешех*, *Фувал*, սակայն անգլիական եւ իսպանական թարգմանութիւններում երկու անուն է՝ *Meshech* (*Mesec*) եւ *Tubal*: Ներկայիս հայերէնի երկու անունները պարահականութիւն չեն. գուգահեռներն առկայ են եւ այլ թարգմանութիւններում: Ննարար է նաեւ, որ հայերէնում *Ռովս*-ն (*Rosh*-*Рош*, իսկ օրինակ բուլղարերէն-*Рос*, որ գրաբարում հենց *Ռովս* պիտի դառնար) ու *Մեսովք*-ը (*Meshech*, *Мешех*, *Месох* բուլղ.) միատրուելով վեր են ածուել *Ռովսմեսովք*-ի: Ընդունելի չենք համարում այն փնտրելը, թէ այս անունների եւ Ծննդ. Ժ. 2՝ Յաբելի որդոց շարքի պարզ համընկնութեան դէպքում, մեր սուրբ թարգմանիչները չէին կողմնորոշուի եւ գրելին, ասենք՝ «*Թորէլ, Մոսոք եւ Թիրաս*»:

ե. Մթին սարերը Նայասարանի հետ կապելու դէպքում պէտք է նկատենք, որ ներկայ դրութեամբ մեզ յայտնի է երեք լեռնագոյացութիւն յիշեալ անուամբ: Ա. Մթին (Խոնաւ) լեռներ Նայասարանի հիւսիսարեւմտեան մասում, Բ. Մթին (Ամանաւ) լեռնաշղթայ Կիլիկեան Տարրսում եւ Գ. Մթին լեռ Մնձորի լեռնաշղթայում. արեւ *Թ. Յակոբեան* եւ ուրիշներ, Նայասարանի եւ յարակից շրջանների փոխանունների բառարան, հատ. 3, Երևան, 1991:

զ. Անգլերէնում դարձեալ *Meshech* փոխանունն է, որ պայմանականօրէն թարգմանում ենք Մեսովք, իսկ դրան յաջորդում է երբայերէն մի բառ, որը մեր խնդրանքով պարզաբանեց Ն. Էմմանուէլ վրդ. Աթաջանեանը: Նրա խօսքով անգլերէն ծանօթագրութեան մէջ կիրառուած երբայերէն բառից բացակայում են այն փառակերպերը, որոնց շնորհիւ հնարարը կլինէր զարդարել *Ս*-ն՝ *Շ*-ից եւ *Բ*-ն՝ *Վ*-ից: Ներկայիս բառը կարող է ընթերցուել առնուազն չորս կերպ՝ Մոշավնի, Մոսավնի, Մոշարնի եւ Մոսարնի:

է. Արարարին եւ Տապանին առնչուող այս փողերի կապակցութեամբ հարկ է անդրադառնալ Բենջամին Տուդելացու Ուղեգրութեանը, որ յիշարակուած է անգլերէն թարգմանութեան ծանօթագրութեան մէջ: «...*Այստեղից երկու օրուայ ճանապարհ է մինչեւ Ռաս-էլ-Աին, որտեղից սկիզբ է առնում էլ Խաբուր (Արաքս), Հնով Հաբուր, գետը, որ Հոսելով Մեզագուց երկրի միջով թափուած է Գոգան գետը: Այստեղ 200 հրէայ կայ: Այնտեղից երկու օրուայ ճանապարհ է մինչեւ Գեզիրեթ Իբն*

*Օմար, որը պարուրում է Հիդդեկել (Տիգրիս) գետը՝ Արարատեան լեռների փէշերի մօտ:*

Այնտեղից չորս մղոն (6.437376 կմ-Պ. Մ.) ճանապարհ է մինչեւ այն վայրը, ուր կանգ առաւ Նոյեան Տապանը, սակայն Օմար Բեն Ալ Խաթաբը երկու լեռներից առաւ տապանը եւ Մուհամեդի ժառանգների համար մզկիթ կառուցեց: Մինչ օրս տապանի մօտ Եզրասի սինագոգն է, եւ Ավ (նոյնն է՝ ՇԻ—Ար.—Պ. Մ.) ամսուայ (յուսարուայ) փաստաթուղթի եւ հրէից օրացոյցի հիմնադրոյի ամիսը.—Պ. Մ.) 9-ին հրէաները գալիս են իրենց քաղաքից աղօթելու...»: Նապուածում րեդ գրած «Մուհամեդի ժառանգները» կապակցութիւնը անգլերէն թարգմանիչ Նաթան Ադլերը օժտել է հետեւեալ ծանօթագրութեամբ. «5 Յովսեպոսը («Հրէական հնախօսութիւն», I, 3) նշում է, որ իր ժամանակներում Նոյեան տապանը դեռ կանգուն էր: Ռաբբի Փեթահիան, որ Բենջամինից յետոյ է ճամփորդել Հայաստանում, խօսում է չորս լեռնագագաթի մասին, որոնց միջեւ կանգ առաւ Տապանը եւ որտեղից չկարողացաւ դուրս շարժուել: Արաբ հեղինակները պատմում են, որ Զաբալ Զուդին (Ղուրան, սուրահ 11, հատուած 44-46)՝ Նոյեան մզկիթը գագաթին, կարելի է տեսնել Գեզիրեթից: Տե՛ս նաեւ Մարկո Պոլօ, Գիրք I, գլ. 3»: Բենջամինի րոդերն ու Ադլերի ծանօթագրութիւնը թարգմանել ենք ըստ՝ *The Itinerary of Benjamin of Tudela, Critical Text, Translation and Commentary by Marcus Nathan Adler, London, 1907, p. 33:*

Ղուրանի յիշարակեալ հարուածը հետեւեալն է. «Եւ Տապանը կանդնեց ձուդիի վրայ». րեն «Ղուրան», թարգմանեց արաբերէնից հայերէնի Արր. Ամիրխանեանց, Վառնա, 1909, էջ 205:

Մարկո Պոլոյի գրքում հետեւեալ նկարագրութիւնն է. «Եւ դուք պէտք է գիտնաք, որ թէ այս Հայաստան երկրումն է, որ գոյութիւն ունի Նոյեան Տապանը՝ մի մեծ լեռան կատարին (որի գագաթին այնքան մշտատեւ ձիւն կայ, որ ոչ ոք չի կարող բարձրանալ, որովհետեւ ձիւնը երբեք չի հալչում եւ հարատեւօրէն աւելանում է նոր տեղումներից): Սակայն եւ այնպէս ստորեւ ձիւնը հալչում է եւ վազում դէպի վար, արտադրելով այնքան հարուստ ու առատ արօտ, որ ամռան մէջ շուրջի հեռու տեղերից հօտեր են ուղարկում այնտեղ արածելու, եւ երբեք [արօտի] պակասութիւն չի զգացում: Հալչող ձիւնը պատճառ է դառնում լեռան վրայ մեծ քանակութեամբ ցեխ առաջանալուն»: Տե՛ն Յովի. *Յակոբեան, Աղբիւրներ Նայասարանի եւ Անդրկովկասի պատմութեան. Ուղեգրութիւններ, հար. Ա., ԺԳ.-ԺԶ. դար (1253-1582), Երևան, 1932, էջ 48-49:*